ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Մարգարյանի, Հեղինե Բիշարյանի, Լևոն Դոխոյանի, Իշխան Խաչատրյանի և Միհր Շահգելդյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-897-16.11.2015-ՊԻ-010/0*) վերաբերյալ:

Օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվում է ընդունել «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք՝ դրա ընդունման անհրաժեշտությունը հիմնավորելով այն հանգամանքով, որ օրենքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունում կներդրվի այլընտրանքային պատիժ կրելու պրոբացիայի ինստիտուտ և ծառայություն, որով լուծում կտրվի մի շարք խնդիրների:

Համամիտ լինելով նախագծի հեղինակների նպատակադրմանը՝ միաժամանակ հարկ ենք համարում տեղեկացնել, որ ի կատարումն Հայաստանի Հանրապետության

Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N ՆԿ-96-Ա կարգադրության 2-րդ կետով հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ցանկի քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման պահանջի, որոնց առաջնայնություններից են քրեակատարողական համակարգի բարեփոխումները՝ ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից մշակվել է «Պրոբացիայի և պրոբացիայի պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որը սահմանված կարգով պետք է դրվի շրջանառության մեջ: Պրոբացիայի ծառայության ստեղծումը նախատեսված է նաև 2014 թվականի մայիսի 22-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հավանությանն արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով և արդեն իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 30-ի նիստի N 19-9 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգը:

Աշխատանքային խմբի կողմից «Պրոբացիայի և պրոբացիայի պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը նախապատրաստելիս ուսումնասիրվել է միջազգային փորձը, սահմանվել են Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության հիմնական խնդիրները, հասկացությունները և ամրագրվել են պրոբացիայի սկզբունքները: Նշված օրենքի նախագծում՝

1) նախատեսվում է պրոբացիայի ծառայության տեղը պետական մարմինների համակարգում, կառուցվածքը, թվարկվում են պրոբացիայի ծառայության լիա-

զորությունները և տարածքային բաժինների գործառույթները՝ կապված այլընտրան-քային խափանման միջոցների կիրառման և ազատազրկման հետ չկապված պատիժների կատարման հետ, ինչպես նաև այլ գործառույթներ: Ամրագրված են պրոբացիայի ծառայության շահառուի իրավական կարգավիճակը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և պրոբացիայի ծառայության պետի լիազորությունները՝ կապված պրոբացիայի ծառայության կազմակերպման և գործունեության հետ.

2) թվարկված են պրոբացիայի ծառայության պաշտոնները և դասային կոչումները, պրոբացիայի ծառայությունում ծառայության անցնելու, պրոբացիայի ծառայության պաշտոնից ազատման և այլ պաշտոնի փոխադրման, պրոբացիայի ծառայողի ատեստավորման և վերապատրաստման ընթացակարգերը, ինչպես նաև պրոբացիայի ծառայողների իրավունքները, պարտականությունները, պաշտոնեական երաշխիքները, սահմանափակումները, խրախուսումը, կարգապահական տույժերը և այլն.

3) ամրագրվում է պրոբացիայի ծառայողին պաշտոնից ազատելու և ծառայությունը դադարեցնելու ընթացակարգերը, պրոբացիայի ծառայությունում ծառայության կամ պաշտոնում վերականգնումը.

4) նախատեսված է պատասխանատվությունը պրոբացիայի ծառայության մասին օրենսդրությունը խախտելու համար, պրոբացիայի ծառայողների գործողությունների բողոքարկումը և պրոբացիայի ծառայության համագործակցությունն այլ մարմինների հետ.

5) սահմանվել են հստակ չափանիշներ, որոնց առկայությունը հնարավորություն է տալիս առավել մանրամասն կարգավորել տվյալ բնագավառի իրավահարաբերությունները:

Օրենքի նախագծի ընդունման հիմքում դրված են Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին ուղղված՝ Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)1 «Պրոբացիայի մասին Եվրոպայի խորհրդի կանոնների վերաբերյալ», CM/Rec(2014)4 «Էլեկտրոնային մոնիթորինգի վերաբերյալ», «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների վերաբերյալ» N R (92) 16, «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների իրականացումը բարելավելու վերաբերյալ» Rec(2000)22, «Պայմանական ազատման (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման) վերաբերյալ» Rec(2003)22, «Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ» Rec(2006)2 հանձնարարականները, Միավորված ազգերի կազմակերպության «Ազատությունից զրկելու հետ չկապված պատժամիջոցների վերաբերյալ նվազագույն կանոնները»:

Մինչդեռ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ներկայացրած օրենքի նախագծում բացակայում են պրոբացիոն ծառայությանը վերաբերող դրույթները: Մասնավորապես, պրոբացիայի ծառայության լիազորությունները և տարածքային բաժինների գործառույթները, ինչպես նաև այլ գործառույթներ, պրոբացիայի ծառայության շահառուի իրավական կարգավիճակը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և պրոբացիայի ծառայության պետի լիազորությունները, կապված պրոբացիայի ծառայության կազմակերպման և գործունեության հետ, պրոբացիայի ծառայության պաշտոնները և դասային կոչումները, պրոբացիայի ծառայությունում ծառայության անցնելու, պրոբացիայի ծառայության պաշտոնից ազատման և այլ պաշտոնի փոխադրման, պրոբացիայի ծառայողի ատեստավորման և վերապատրաստման ընթացակարգերը, ինչպես նաև պրոբացիայի ծառայողների իրավունքները, պարտականությունները, պաշտոնեական երաշխիքները, սահմանափակումները, խրախուսումը, կարգապահական տույժերը և այլն, ինչը չի ապա-

հովում նախագծով նախատեսվող լուծումների և կարգավորումների համակարգային ամբողջականությունը:

Հարկ ենք համարում տեղեկացնել նաև, որ օրենքի նախագծի ընդունումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացման անհրաժեշտության:

Ելնելով նշվածից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունում մշակվող «Պրոբացիայի և պրոբացիայի պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի դրույթները կարգավորում են առավել լայն և ընդգրկուն շրջանակի իրավահարաբերություններ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված նախագծի ընդունմանը և օրենսդրական նախաձեռնության հեղինակներին առաջարկում է ներկա փուլում ձեռնպահ մնալ օրենսդրական նախաձեռնության քննարկումից և դրա դրույթներին անդրադառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայացվելիք նախագծի քննարկումների շրջանակներում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն
«Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը

1. «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չի առաջանա:
3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունմամբ նախատեսվում է ներդնել այլընտրանքային պատիժ կրելու պրոբացիայի ինստիտուտ, ինչով առաջարկվում է կարգավորել որոշ խնդիրներ, մասնավորապես՝ մեղադրյալների ուղղիչ և կրկնակի քրեական իրավախախտումների վերաբերյալ զգուշացնող միջոցառումներ և ազատազրկման հետ չկապված որոշակի պատժամիջոցներ:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում ներդնել այլընտրանքային պատիժ կրելու մեխանիզմներ,* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում ներդնել այլ-ընտրանքային պատիժ կրելու պրոբացիայի ինստիտուտ և ստեղծել պրոբացիոն ծառայություն:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Նախագծի ընդունումը պետական բյուջեի եկամուտների վրա կունենա չեզոք ազդեցություն:

Միաժամանակ հայտնում ենք, որ Նախագծի ընդունումը կհանգեցնի ՀՀ պետական բյուջեի ծածսերի ավելացման, սակայն ազդեցության կոնկրետ չափը հնարավոր չէ հաշվարկել համապատասխան տեղեկատվության բացակայության պատճառով:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-897-16.11.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է պրոբացիայի նպատակները, խնդիրները, սկզբունքները, կիրառման հիմքերը

2.Պրոբացիայի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության քրեական եւ քրեական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով, սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով:

Հոդված 2. Պրոբացիայի խնդիրները

Պրոբացիայի խնդիրներն են՝

1. Մինչդատական զեկույցների պատրաստում

2. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ, հասարակական կամ ուղղիչ աշխատանքներով զբաղվելու իրավունքից զրկված մեղադրյալների նկատմամբ վերահսկողություն

3. Ազատազրկման հետ չկապված որոշակի պատժամիջոցների իրականացում

4. Մեղադրյալի հետ սոցիալ-դաստիարակչական աշխատանքի իրականացում

5. Մեղադրյալների ուղղիչ եւ կրկնակի քրեական իրավախախտումների վերաբերյալ զգուշացնող միջոցառումների իրականացում

Հոդված 3. Պրոբացիայի սկզբունքները

Պրոբացիան հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա՝

1. Արդարություն

2. Օրինականություն

3. Պատիժը կրելու անխուսափելիություն

4. Քաղաքացու իրավունքների եւ ազատությունների համապատասխանություն

5. Արժանապատվության հարգում

6. Օրենքի նկատմամբ հավասարություն

7. Կոնֆիդենցիալություն

8. Անաչառություն

Հոդված 4. Պրոբացիայի կիրառման հիմքերը

1. Դատարանը անձի նկատմամբ պրոբացիա կիրառելու որոշում կայացնելուց առաջ հաշվի է առնում կատարված քրեական հանցագործության բնույթը

2. Պրոբացիայի կիրառման հիմք են հանդիսանում՝

1. Դատարանի գրավոր հարցումը պրոբացիայի մարմին՝ մեղադրյալի վերաբերյալ մինչդատական զեկույց տրամադրելու մասին

2. Դատարանի մեղադրական դատավճիռը, ըստ որում անձը զրկվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու, որոշակի գործունեությամբ զբաղվելու կամ որոշակի հասարակական եւ ուղղիչ աշխատանքներ կատարելու իրավունքից

3. Դատարանի մեղադրական դատավճիռը, ըստ որի անձը դատապարտվում է ազատազրկման սահմանված ժամկետով

4. Դատարանի մեղադրական դատավճիռը, ըստ որի անձը դատապարտվում է ազատության սահմանափակման

5. Դատարանի մեղադրական դատավճիռը, ըստ որի անձն ազատված է պատիժը փորձաշրջանով կրելուց

6. Դատարանի որոշումը՝ պատիժն ազատազրկմամբ կամ որոշակի ժամանակահատվածով ազատության սահմանափակմամբ կրելը փոխարինել հասարակական կամ ուղղիչ աշխատանքներ կրելու պատժով

7. Դատարանի որոշումը՝ հղի կամ մինչեւ 3 տարեկան երեխայի խնամակալությամբ զբաղվող կնոջը պատիժը կրելուց ազատելու վերաբերյալ

8. Ներման ակտ, ըստ որի դատապարտյալի պատիժը կամ պատժի չկրած մասը փոխարինվում է որոշակի հասարակական կամ ուղղիչ աշխատանք կատարելով:

Հոդված 5. Հիմնական հասկացությունները

Սույն օրենքով օգտագործվող հասկացությունների բովանդակությունը.

1. պրոբացիա՝ պրոբացիոն ծառայության շահառուի նկատմամբ օրենքով սահմանված կարգով նշանակված ազատազրկման հետ չկապված պատժատեսակների եւ հարկադրանքի այլ միջոցների կատարումն է հասարակությունում, որն իր մեջ ներառում է հանցանք կատարած անձի նկատմամբ հսկողություն, ուղղորդում եւ աջակցություն՝ նպատակ ունենալով նրա վերասոցիալականացման միջոցով նպաստել հասարակության անվտանգության ապահովմանը

2. էլեկտրոնային հսկողություն՝ ռադիոալիքային, կենսաչափական կամ արբանյակային հսկողություն անձի գտնվելու վայրի, տեղաշարժի եւ վարքի նկատմամբ

3. պրոբացիոն ծառայության շահառու՝ անձ, որի նկատմամբ դատարանի կողմից նշանակվել է ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց կամ պատիժ կամ ներկայացվելու է խորհրդատվական զեկույց

4. անձնական գործ՝ պրոբացիոն ծառայության շահառուի վերաբերյալ գաղտնի փաստաթղթերի փաթեթ

5. տվյալների շտեմարան՝ պրոբացիոն ծառայության շահառուների եւ պրոբացիոն ծառայության գործունեության վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվության ամբողջություն

6. խորհրդատվական զեկույց (այսուհետ՝ զեկույց)՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ դատարանի

միջնորդությամբ պրոբացիոն ծառայության կողմից դատապարտյալի վերաբերյալ ներկայացվող տեղեկատվություն

7. վերահսկողության պլան՝ փաստաթուղթ, որտեղ սահմանված են պրոբացիոն ծառայության շահառուի վերահսկողության ենթակա գործողությունները

Հոդված 6. Պրոբացիայի նպատակը

1. Պրոբացիան նշանակվում է, որպեսզի անձին հնարավորություն տրվի հասարակությանը վերաինտեգրվել, պրոբացիոն ժամանակահատվածը կարող է տատանվել 6 ամսից մինչեւ 3 տարի: Պրոբացիայի որոշում անձի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ վերջինս կհայտնի պրոբացիայի բոլոր պահանջներին ենթարկվելու պատրաստակամություն:

Պրոբացիայի բոլոր փուլերում, եթե դատավորը ստանում է տեղեկատվություն պահանջները չկատարելու վերաբերյալ, կարող է մեղադրյալին ծանուցում ուղարկել կամ նույնիսկ կալանավորման որոշում կայացնել:

Հոդված 7. Պրոբացիայի կիրառման սահմանափակումները.

1. Պրոբացիան չի կիրառվում՝

1. ծանր եւ առանձնապես ծանր հանցագործություն կատարած անձանց նկատմամբ

2. նախկինում դատապարտված անձանց նկատմամբ:

Հոդված 8. *Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:*

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

«Պրոբացիայի մասին» օրենքի նախագի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունում կներդրվի այլընտրանքային պատիժ կրելու պրոբացիայի ինստիտուտ եւ կստեղծվի պրոբացիոն ծառայություն, որով լուծում կտրվի հետեւյալ խնդիրներին՝
1. հանցանք կատարած անձանց այլընտրանքային՝ ազատության մեջ պրոբացիոն ծառայության կողմից իրականացվող ուղղիչ քայլերի միջոցով առավել կբարձրացվի հասարակության պաշտպանությունը

2. կնվազի կրկնահանցագործությունը

3.արդյունավետորեն կիրականացվի դատարանի կողմից նշանակված ազատազրկման հետ չկապված պատժատեսակների եւ հարկադրանքների այլ միջոցների կիրառումը

4. կլուծվի հանցագործություն կատարած անձանց վերասոցիալականացման հարցը

5. տնային կալանքի վարչական հսկողության եւ բացակայության արգելքի խափանման այլընտանքային միջոցները կիրառելով՝ հնարավորինս կթեթեւացվի նաեւ քրեակատարողական

հիմնարկների գերծանրաբեռնվածությունը: